

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԼՈՒ-
ԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Իրավաբանական անձինք քաղաքացիական շրջանառության մեջ ունեն որոշիչ դերակատարություն՝ հատկապես գործարարական գործունեության ոլորտում: Դրանց ստեղծման ու գործունեության դադարման գործընթացները ժամանակակից քաղաքացիական հարաբերությունների անքակտելի մասնիկներն են: Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ այդ գործընթացն առավել պատկերավոր կերպով ներկայացվում է «իրավաբանական անձի կյանքի ցիկլ» արտահայտությամբ²:

Իրավաբանական անձի գոյությունը դադարեցվում է կա՛մ նրա հիմնադիրների կամքով (կառավարման համապատասխան մարմնի կամավոր որոշմամբ) (կամավոր լուծարում), կա՛մ դատարանի որոշմամբ, օրենքով նախատեսված անձանց պահանջով (հարկադիր լուծարում): Իրավաբանական անձի լուծարման խնդիրների քննարկման անհրաժեշտությունն առաջին հերթին կապված է այս ինստիտուտի հասարակական կարևորության հետ: Բացի այդ, հատկապես հարկադիր լուծարման դեպքում էականորեն շոշափվում են բավական լայն շրջանակի անձանց շահեր, այդ թվում՝ հիմնադիրների (մասնակիցների), պարտատերերի, իրավաբանական անձի աշխատակիցների, նրա կողմից թողարկված արժեթղթերի շրջանառությամբ առնչվող և այլ անձանց շահեր: Այդիսկ պատճառով սույն հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք հարկադիր լուծարման գործընթացում ի հայտ եկող մի շարք խնդիրների և փորձել ներակայացնել համապատասխան լուծումներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի³ 3-րդ հոդվածի (այսուհետ՝ Օրենսգիրք) համաձայն քաղաքացիներն ու իրավաբանական անձինք

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Դ. Մ. Սերոբյան:

² Տե՛ս Лебединец О. Н., Жизненный цикл юридических лиц (гражданско-правовой аспект): Дисс.... канд. юрид. наук., М., 2000, էջ 5:

³ ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.98:

քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում և իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց, իսկ մասնավոր հարաբերությունները կարգավորող քաղաքացիական օրենսդրությունն ի թիվս այլ սկզբունքների հիմնվում է նաև մասնավոր գործերին որևէ մեկի կամ մյուսի միջամտության անթույլատրելիության ու քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքների վրա: Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, և եթե դա անհրաժեշտ է պետական ու հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետ): Այս դրույթներն ամբողջությամբ վերաբերում են նաև իրավաբանական անձի մասնակիցների կամ նրա մարմինների կողմից նրա հետագա ճակատագիրը որոշելու մասնավոր դեպքին: Նշված անձինք (իրավաբանական անձի կառավարման մարմինները) գործող օրենսդրության շրջանակներում ազատ են որոշելու նրա վերակազմակերպման և լուծարման հարցերը: Սակայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է նաև իրավաբանական անձի հարկադիր լուծարման հնարավորություն, որը դիտարկվում է որպես դրա ստեղծման կամ գործունեության ընթացքում թույլ տրված իրավախախտումների համար պետության կողմից կիրառվող սանկցիա: Այս իմաստով, իրավաբանական անձանց հարկադիր լուծարումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց¹:

Օրենսգրքում «հարկադիր լուծարում» եզրույթը չի օգտագործվում: Այն ըստ էության հանդիսանում է սովետական իրավագիտության կողմից մշակված և ներմուծված տերմին²: Սակայն այլ ի-

¹ Որոշ հետազոտություններում արտահատվել է նաև այն կարծիքը, որ իրավաբանական անձնաց հարկադիր լուծարումը հանդիսանում է ինչպես լուծարվող իրավաբանական անձի, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերությունների այլ մասնակիցների իրավունքների պաշտպանության միջոց (տե՛ս *Потягаева Л. И., Ликвидация некоммерческих организаций по российскому гражданскому законодательству: Автореф. дис. ... канд. юрид. наук, էջ 10*):

² Տե՛ս օրինակ, *Грибанов В. П., Юридические лица, М., 1961, էջ 31-35 կամ Братусь С. Н., Субъекты гражданского права, М., 1950, էջ 213-232*:

րավական ակտերում մենք հանդիպում ենք «հարկադիր լուծարում» եզրույթի օգտագործմանը, օրինակ՝ «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի¹ 51-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերությունը կարող է դատական կարգով հարկադիր լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է իրավաբանական անձանց հարկադիր լուծարման հետևյալ հիմքերը.

1) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ,

2) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Առևտրային իրավաբանական անձանց հարկադիր լուծարման այլ հիմքեր նախատեսված են նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով², որոնց առկայության դեպքում ընկերությունը պետք է հարկադիր լուծարվի: Օրինակ, նշված օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին: Իսկ եթե Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատե-

¹ ՀՀՊՏ 2001/38(170), 07.12.01:

² ՀՀՊՏ 2001/34 (166), 06.11.01:

րերը, ինչպես նաև լիազորված պետական մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում դատական կարգով: Նմանատիպ նորմեր են պարունակվում նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում (34-րդ հոդվածի 2-րդ կետ): Նույնանման իրավակարգավորում նախատեսված է նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, որի կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է այն տեսակետը, որ նման դեպքերում իրավաբանական անձի լուծարման հնարավորությունը կապված է նրա կողմից օրենսդրության որոշակի պահանջների խախտման հետ¹:

Դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու՝ որպես Օրենսգրքով նախատեսված իրավաբանական անձանց հարկադիր լուծարման առաջին հիմքի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ անհասկանալի է, թե ինչ խախտումների դեպքում դատարանը կարող է իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչել²: Կարելի է ենթադրել, որ ցանկացած խախտման դեպքում իրավաբանական անձը ենթակա է հարկադիր լուծարման: Գտնում ենք, որ նմանատիպ անհարկի միջամտությունները կարող են խաթարել քաղաքացիական իրավահարաբերությունների բուն էությունը, մանավանդ որ այդ խախտումները տեղի են ունեցել ոչ թե իրավաբանական անձի գործունեության, այլ ստեղծման ընթացքում: Ստացվում է, որ զուտ ձևական ընթացակարգերը չպահպանելու հետևանքով կարող է հանրության և պետության համար առանցքային նշանակություն ունեցող իրավաբանական անձը լուծարվել, ինչը կարող է խաթարել քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունը, լուրջ սպառնալիքներ առաջացնել բնակչության կենցաղային, առողջապահական և այլ պահանջմունքների բավարարման հարցում:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում 2014 թվականի սեպտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների արդ-

¹ St' u Шапкина Г. С., Новое в российском акционерном законодательстве // Приложение к журналу «Хозяйство и право». 2001 №-11, էջ 61:

² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 143:

յունքում 51-րդ հոդվածով նախատեսվեց այն կանխավարկածը, որ անձը, որը բարեխղճորեն հիմնվել է իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրի տվյալների վրա, իրավունք ունի ելնել այն փաստից, որ դրանք համապատասխանում են իրականությանը¹: Այսինքն, պետք է գործի հանրային գրանցամատյաններում կատարված գրառումների հավաստիության կանխավարկածը, և անհրաժեշտ է հնարավորություն տալ իրավաբանական անձին շտկելու այդ խախտումները: Օրինակ՝ Հոլանդիայի քաղաքացիական օրենսգրքի 2:20 հոդվածով սահմանված է, որ շրջանային դատարանը կայացնում է իրավաբանական անձը լուծարելու մասին որոշում, եթե դրա հիմնադրման ժամանակ տեղի են ունեցել վրիպակներ, դրա հիմնադրման փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին կամ էլ, եթե այն իր բովանդակությամբ չի համապատասխանում իր կազմակերպարավական ձևին: Մակայն նույն հոդվածով նախատեսված է նաև, որ եթե ընկերությունը դատարանի սահմանած ժամկետում վերացնում է առկա թերությունները, ապա այն չի լուծարվում²:

Ուստի կարծում ենք, որ օրենսգրքով որպես հարկադիր լուծարման հիմք պետք է դիտել միայն օրենքի կոպիտ խախտումները, որոնք հնարավոր չէ վերացնել առանց այլ անձանց սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների խախտման:

Օրենսգրքով նախատեսված դատարանի վճռով տնտեսական ընկերության հարկադիր լուծարման հաջորդ հիմքն առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելն է: Լիցենզավորման ենթական գործունեության տեսակները նախատեսված են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով³: Նույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանվում է, որ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել այդ օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: Առանց լիցենզիայի օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետա-

¹ http://base.garant.ru/10164072/4/#block_1004:

² <http://www.dutchcivillaw.com/legislation/dcctitle2211.htm>:

³ ՀՀՊՏ 2001/26(158), 08.08.01:

կան տուրքի գումարի չափով վնասի հատուցում: ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի¹ իմաստով նման գործունեությունը համարվում է ապօրինի ձեռնարկատիրություն, եթե այն զուգորդվել է անձանց կամ կազմակերպությունների զգալի չափով կամ խոշոր վնաս պատճառելով: Սակայն նշված հոդվածով պատասխանատվության է ենթարկվում ոչ թե իրավաբանական անձը, այլ դրա ղեկավար անձինք: Պետք է նշել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու խնդիրը նոր չէ: Դեռևս 1670 թ. Ֆրանսիայում հատուկ օրդոնանս է ընդունվել, որով նախատեսվել է կորպորացիաների կողմից կատարված հանցագործությունների քրեական դատավարությունների իրականացման կարգը և դրանց համար կիրառվող պատժատեսակները: Հիմա էլ մի շարք արտասահմանյան երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա) կորպորացիաների նկատմամբ կիրառվում են քրեական պատասխանատվության միջոցներ, օրինակ՝ տուգանք, գործունեության դադարեցում, լուծարում և այլն: Այսինքն, այս երկրներում լուծարումը կիրառվում է ոչ թե որպես քաղաքացիական, այլ քրեական պատասխանատվության միջոց²:

Ուստի գտնում ենք, որ քաղաքացիական օրենսգրքով իրավաբանական անձի հարկադիր լուծարման նման հիմք չպետք է նախատեսվի և իրավաբանական անձն այս հիմքի առկայության պայմաններում պատասխանատվության պետք է ենթարկվի վարչական կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված սանկցիաների շրջանակներում:

Իրավաբանական անձանց հարկադիր լուծարման մյուս հիմքը օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումներն են: Հասկանալի է, որ կոնկրետ դեպքում դատարանը պետք է որոշի՝ արդյո՞ք կատարված խախտումները կոպիտ են, թե ոչ: Քննարկման առարկա կարող է դառնալ նաև «բազմակի» եզրույ-

¹ ՀՀՊՏ 2003/25(260), 02.05.03:

² St' u Уголовное право России. Часть Общая, учеб. для вузов: 2-е изд., М., Wolters Kluwer, 2005, էջ 184, ինչպես նաև В. Д. Аветисян, С. С. Аветисян, Некоторые проблемы административной и гражданской ответственности корпораций за уголовно наказуемые деяния, Правонарушение и юридическая ответственность, Материалы Международной научно-практические конференции, Тольятти, 13-14 ноября 2012 года, էջ 13-20:

թի մեկնաբանությունը: Կարծում ենք, որ նման ձևակերպմամբ լուծարման հիմքի նախատեսումը դատարանի համար ոչ թե սահմանում է գործելու որոշակի կանոն, այլ այս հիմքի կիառությունը ամբողջությամբ կախվածության մեջ է գտնվում դատարանի հայեցողությունից և մեկնաբանողական վերաբերմունքից¹:

Նշված խնդիրների առավել ամբողջական հետազոտության գործում կարևորում ենք անդրադարձը այլ երկրներում առևտրային իրավաբանական անձանց լուծարման հիմքերին: Այժմ, երբ Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը, հետաքրքրական է ուսումնասիրել ԵՏՄ երկրների օրենսդրությունը: Օրինակ՝ Ղազախստանի քաղաքացիական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով² կարգավորվում են իրավաբանական անձանց հարկադիր լուծարման հիմքերը, որոնց շարքում հետաքրքրություն է ներկայացնում փաստացի հասցեից կամ գտնվելու վայրից իրավաբանական անձի, ինչպես նաև դրա կառավարման հարցում առանցքային նշանակություն ունեցող հիմնադիրների (մասնակիցների) ու պաշտոնատար անձանց բացակայության հիմքով ընկերության հարկադիր լուծարումը: Իհարկե, այստեղ խոսքը չգործող իրավաբանական անձանց լուծարման մասին է, ինչը մեր կարծիքով ողջունելի է, քանի որ գրանցված, սակայն քաղաքացիական շրջանառությանը չմասնակցող իրավաբանական անձինք չեն ծառայում տնտեսական հարաբերությունների զարգացման գաղափարին և նման ձևական սուբյեկտների գոյությունն արադարացված չէ:

Բելոռուսի Հանրապետությունում առևտրային իրավաբանական անձանց հարկադիր լուծարման հիմքերը նախատեսված են Քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածով, որոնց շարքում հետաքրքրական է իրավաբանական անձանց լուծարման օրենսդրությամբ նախատեսված կարգի և ժամկետների խախտումների

¹ Իրավաբանական անձանց՝ Օրենսգրքով նախատեսված լուծարման մյուս հիմքերը քննարկման առարկա չեն դարձել սույն աշխատանքի շրջանակներում, քանի որ վերաբերում են ոչ առևտրային իրավաբանական անձանց, իսկ սնանկությանը վերաբերող հարաբերությունները իրենց բնույթով ոչ կորպորատիվ են:

² http://online.zakon.kz/Document/?doc_id=1006061#pos=969;-248&sel_link=1003435428:

հիմքով հարկադիր լուծարումը¹: Այսինքն, եթե իրավաբանական անձը կամավոր լուծարվում է, սակայն խախտվում են օրենսդրության պահանջները կապված ժամկետների և կարգի հետ, ապա իրավասու պետական մարմնի հայցով դատարանը որոշում է կայացնում իրավաբանական անձի հարկադիր լուծարման վերաբերյալ: Հետևաբար, Բելոռուսի Հանրապետությունում իրավաբանական անձանց լուծարման ամբողջ գործընթացը գտնվում է պետական հսկողության ներքո²:

Իսկ ինչ վերաբերում է մեր հարևան Վրաստանի Հանրապետությանը, ապա նշենք, որ Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածում նախատեսված է, որ իրավաբանական անձինք կարող են լուծարվել կանոնադրային նպատակներին հասնելու, սնանկության և գրանցման վերացման հիմքերով³: Այսինքն, այստեղ ևս օրենսդիրը հնարավորինս բացառել է պետական մարմինների անհարկի միջամտությունը քաղաքացիական իրավահարաբերություններին:

ՀՀ օրենսդրությամբ (Օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետ) իրավաբանական անձանց հարկադիր լուծարման պահանջով դատարան հայց կարող են ներկայացնել իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: «Պետական մարմին» եզրույթն Օրենսգրքը չի մեկնաբանում, սակայն, ելնելով ՀՀ Սահմանադրության⁴ 4-րդ և 146-րդ հոդվածների իմաստից, ենթադրվում է, որ նման լիազորությամբ պետք է օժտված լինեն գործադիր իշխանության մարմինները, մասնավորապես նման հայցեր իրավունք ունեն ներկայացնել հարկային մարմինները, դատախազությունը և այլն: Պետք է նշել, սակայն, որ հարակից իրավական որևէ ակտով

¹ http://www.pravo.by/world_of_law/text.asp?RN=hk9800218#&Chapter=4:

² Իրավաբանական անձանց լուծարման վերաբերյալ Եվրոպական և այլ երկրների օրենսդրական կարգավորումների մասին մանրամասն տե՛ս Սողոմոնյան Ա. Մ., Հայաստանի Հանրապետությունում լուծարվող տնտեսական ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների 2014 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2015 թ., էջ 210-223:

³ http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf:

⁴ ՀՀՊՏ 2005 (հառ. թող.) 05.12.05:

այդ մարմիններին նման իրավասություն վերապահված չէ: Մասնավորապես, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում (11-րդ հոդվածի 1-ին կետի 13-րդ ենթակետ)¹ հարկային մարմնի իրավունքների շարքում նշվում է, որ հարկային մարմինը օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի հայց ներկայացնել Հայաստանի Հանրապետության դատարաններ՝

- հարկային պարտավորությունների բռնագանձման վերաբերյալ,

- հարկ վճարողին սնանկ ճանաչելու վերաբերյալ:

Ինչպես նկատում ենք, այստեղ Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված որևէ հիմքով իրավաբանական անձանց հարկադիր լուծարման պահանջով դատարան հայց ներկայացնելու հարկային մարմնի իրավունքը նախատեսված չէ: Նմանատիպ նորմեր բացակայում են նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որը նշված օրենքի խախտումների համար նախատեսում է միայն տուգանք նշանակելու հնարավորություն (36-րդ հոդված)²:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով հարկադիր կարգով ընկերությունը լուծարելու պահանջ ներկայացնելու իրավունքը վերապահվում է ընկերության բաժնետերերին, պարտատերերին և իրավասու պետական մարմինին: Մակայն հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի նվազագույն չափի պահանջ նախատեսված է միայն որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող իրավաբանական անձանց համար³: Հետևաբար,

¹ ՀՀՊՏ 2002.08.14/33(208):

² ՀՀՊՏ 2000/30(128), 15.12.00:

³ Բանկեր, որոնց դեպքում կանոնադրական կապիտալի նվազագույն չափը ըստ ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թ. փետրվարի 9-ի թիվ 39Ն որոշմամբ հաստատված՝ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի 16-րդ կետի կազմում է 5 միլիարդ ՀՀ դրամ, ապահովագրական ընկերություններ, որոնց համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվի նվազագույն մեծությունը 50 մլն ՀՀ դրամ է՝ ըստ ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թ. հունիսի 29-ի թիվ 151 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշ-

այս նորմը կարող է կիրառվել միայն սահմանափակ դեպքերում: Իսկ Օրենսգրքում նշվում է, որ ընկերությունը լուծարելու պահանջով պետք է դատարան դիմի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը:

Անշուշտ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում (չնայած որ այս մասով հակասություն կա Օրենսգրքի հետ) ցուցաբերվել է ավելի առաջադիմական մոտեցում, քանզի ուսումնասիրելով զարգացած երկրների փորձը, կարող ենք նշել, որ հիմնականում ընկերությունների հարկադիր լուծարման պահանջով դատարան հայց ներկայացնելու իրավունքը պատկանում է միայն ընկերության պարտատերերին: Նմանատիպ կարգ գործում է օրինակ Շվեյցարիայում¹: Իսկ Կանադայում ցանկացած շահագրգիռ անձ ընկերությունը լուծարելու պահանջով կարող է դիմել դատարան, եթե երկու տարի անընդմեջ չի հրավիրվել մասնակիցների ընդհանուր ժողով, կամ մերժվել է ընկերության մասնակցի պահանջը ծանոթանալու օրենքով թույլատրվող փաստաթղթերին կամ ստանալու որևէ տեղեկանք²: Հոլանդիայում ընկերությունը հարկադիր լուծարելու պահանջով կարող են դատարան դիմել ցանկացած շահագրգիռ անձ, ինչպես նաև դատախազական մարմինները³: Ամերիակայի Միացյալ Նահանգներում ընկերության հարկադիր լուծարման պահանջով դատարան կարող են դիմել ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերը, պարտապանները կամ էլ նահանգի գլխավոր դատախազը⁴:

Ուսումնասիրելով դատական պրակտիկան՝ պարզ դարձավ, որ նման պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրականում չեն դիմում դատարան, իսկ այն դեպքերում, երբ ընկերությունների հարկադիր լուծարման պահանջով դա-

վարկման կարգը, վերապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» Կանոնակարգ 3/02-ի 6-րդ կետի:

¹ St u Switzerland Company Laws and Regulations Handbook, Usa Ibp Usa, Int'l Business Publications, 2009, էջ 41:

² <https://www.ic.gc.ca/eic/site/cilp-pdci.nsf/eng/cl00263.html>:

³ <http://www.dutchcivillaw.com/legislation/dcctitle2211.htm>:

⁴ The law of corporations and other business organizations, Angela Schneeman, six edition, Delman cengage learning, 2012, USA, էջ 627:

տարան են դիմում այլ անձինք, նման հայցերը մերժվում կամ կարճվում են¹:

Ուստի՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետը ենթակա է փոփոխման: Անհրաժեշտ է ընդլայնել դատական կարգով իրավաբանական անձանց լուծարման հայցով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, և նման իրավունք վերապահել նաև օրենքով նախատեսված շահագրգիռ այլ անձանց: Քանզի շուկայական հարաբերությունների ներդրման և զարգացման պայմաններում անհրաժեշտ է հրաժարվել մասնավոր հարաբերություններից պետական մարմինների նմանատիպ միջամտություններից, և եթե քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցակազմի (օրինակ՝ ապօրինի ձեռնարկատիրության) հատկանիշները բացակայում են, պետք է հնարավորություն տալ քաղաքացիական շրջանառության մասնակիցներին անձամբ իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը, իսկ հարկադիր լուծարման ինստիտուտը կիրառել ոչ թե որպես պատասխանատվության, այլ իրավունքների պաշտպանության միջոց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել հարկադիր լուծարման ինստիտուտին՝ ՀՀ օրենսդրի կողմից տրված իմաստն ու բովանդակությունը, դատական կարգով իրավաբանական անձանց լուծարման պահանջ ներկայացնելու իրավունք վերապահել ոչ միայն պետական մարմիններին, այլև շահագրգիռ այլ անձանց, մանրամասն կարգավորել հարկադիր լուծարման ընթացքում լուծարային հանձնաժողովի ստեղծման կարգը, կառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և օրենքով ամրագրել այն որոշումների ցանկը, որոնք անհրաժեշտ են հարկադիր լուծարման ընթացակարգը սկսելու և արդյունավետ իրականացնելու համար: Կարծում ենք, որ մեր կողմից կատարված առաջարկները կարող են լուծում տալ քննարկված խնդիրներին և նպաստել նշված ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանը:

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Երևանի Գենտրոն և Նոքթ-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թ. ապրիլի 16-ի թիվ ԵԿԴ/0137/02/10 և Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թ. հունվարի 8-ի թիվ ԳԴ/0363/02/12 քաղաքացիական գործերով կայացված վճիռները:

Согомонян Ашкен

Соискатель кафедры гражданского права ЕГУ

ОСНОВЫ ПРИНУДИТЕЛЬНОЙ ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Основания и порядок ликвидации юридических лиц составляют один из важнейших проблем корпоративного права. Исходя из этого обстоятельства, автор в этой статье обсудил теоретические и практические проблемы связанные с порядком, основаниями ликвидации юридических лиц, состава субъектов и их деятельностью в этом процессе, предложил способы их разрешения и представил зарубежный опыт связанный с этими проблемами.

Soghmonyan Ashkhen

Post graduate researcher of the YSU Chair of Civil Law

THE BASICS OF COMPULSORY LIQUIDATION OF ECONOMIC ENTITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

The grounds and regularity for liquidation of legal entities constitute one of the most important issues of corporate law. Therefore the author of this article discussed the problems associated with the regularity and grounds, structure of the members and their activities in this process, offered some solutions and presented foreign experience associated with these problems.

Բանալի բառեր՝ *հարկադիր լուծարում, դատական կարգ, պետական մարմին, պետական գրանցում, իրավաբանական անձանց լուծարում, լուծարման հանձնաժողով:*

Ключевые слова: *принудительная ликвидация, судебный порядок, государственный орган, государственная регистрация ликвидации юридических лиц, ликвидационная комиссия.*

Key words: *compulsory liquidation, court order, state agency, state registration of liquidation of legal entities, liquidation commission.*